ով իրազեկված է, նա պաշտպանված է

արտակարգ թերթ

N 10 (474) 29.3.2013 -4.4.2013 www.emergency.am

# Որ նվազեն գազից թունավորումները

Գազի սարքավորումների օգտագործման կանոնների խախտման արդյունքում շմոլ գազից թունավորման դեպքերի հաճախակիացման հետ կապված, «Էյ-Ի-Ջի Սերվիս» ընկերությունը քաղաքացիներին կոչ է անում բնական գազի օգտագործման ընթացքում հետեւել անվտանգության կանոններին.

• Գազի սարքերն օգտագործելիս անպայման օդափոխեք տարածքը եւ ստուգեք օդափոխման եւ ծխատար խողովակների ձգողությունը՝ գազի սարքերը միացնելուց առաջ եւ հետո, որպեսզի գազի այրվող նյութերը տարածք չներթափանցեն:

• Ձգողության բացակայության դեպքում անջատեք գազի սարքերը:

• Հիշեք, որ միացված գազի սարքերը չի կարելի թողնել առանց հսկողության:

• Ուժեղ քամու, մառախուղի, անձրեւի եւ ձնաբքի ժամանակ արգելվում է միացնել գազի այն սարքերը, որոնց այրման նյութերը դուրս են գալիս ծխատար խողովակներով, քանի որ այդ դեպքում խախտվում է ձգողությունը:

• Հետեւեք, որպեսզի երեխաներն օգտագործեն գազի սարքերը միայն ձեր ներկայությամբ եւ հետեւեն անվտանգության կանոններին:

• Գազի սարքերը մաքուր պահեք:

• Գազի սարքերի աշխատանքում անսարքություն հայտնաբերելու դեպքում անպայման հայտնեք դրա մասին գազի սպառման համակարգերի տեխնիկական սպասարկումն իրականացնող տարածքային ծառայությանը:

Գազի հոտ զգալու դեպքում անպայման բացեք պատուհանն ու զանգահարեք գազի վթարային ծառայություն՝ 1-04 հեռախոսահամարով: Վթարային ջոկատի ժամանումից առաջ չի կարելի օգտվել բաց կրակից, միացնել եւ անջատել էլեկտրական սարքավորումներն ու էլեկտրական լամպերը: Դա կարող է գազի այրման պատճառ դառնալ:

Եղեք զգոն եւ զգույշ,
գազը չի ների սխալները:

«Էյ-Ի-Ջի Սերվիս»,
հասարակայնության հետ
կապերի եւ ուսուցման բաժին